



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի խորհրդի 14.09.2012 թ. № 10-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(AMICUS CURIAE)

№ 10-12-Ա

ք.Երևան

14.09.2012 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Զոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ Արտակ Զեյնալյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերի վերլուծության հարցերի հանձնաժողովի նախագահ Վահե Գրիգորյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Քաղաքացի Արտակ Ղազարյանի դիմումի հիման վրա՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.⁸-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

Հարցի կարևորությունը.

Դիմողի կողմից բարձրացված իրավական խնդիրն իրենից լուրջ արժեք է ներկայացնում, քանի որ վերաբերվում է վարչական պատասխանատվության ենթարկվող սուբյեկտներին, մասնավորապես՝ շոշափում է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության խնդիրը:

Խնդիրը կայանում է նրանում, որ վիճարկվող նորմով նախատեսված կարգավորման համաձայն՝ իրավաբանական անձի կողմից կատարված

իրավախախտումների դեպքում վարչական պատասխանատվություն է առաջանում ֆիզիկական անձանց համար:

Կենտրոնն իր 17.01.2012 թվականի թիվ 01-Լ եզրակացությամբ¹ անդրադարձել է Օրենսգրքի խնդիրներին, ինչպես նաև՝ վարչական իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկող մարմիններին և նրանց իրավասությանը:

Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).

Սույն մեկնաբանությունների շրջանակում անդրադարձ է կատարվելու՝

- վիճարկվող նորմի մեկնաբանությանը.
- իրավաբանական անձանց պատասխանատվության առանձնահատկություններին.
- իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության վերաբերյալ միջազգային փորձին.

I. Վիճարկվող նորմի մեկնաբանությունը.

1. Սույն գործով դիմողի կողմից վիճարկվում է Օրենսգրքի 169.⁸-րդ հոդվածը², որը սահմանում է. *«Գործատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետներում աշխատավարձ չհաշվարկելը կամ չվճարելը կամ ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ժամանակ վճարում չկատարելը կամ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և (կամ) 2-րդ հոդվածներով նախատեսված չափից պակաս աշխատավարձ սահմանելը կամ այդ մեծությունը գերազանցող չափով աշխատավարձը սխալ հաշվարկելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում իսախտում թույլ տված անձի նկատմամբ՝ յուրաքանչյուր աշխատողի մասով չհաշվարկված կամ չվճարված աշխատավարձի մեկ քառորդի չափով:»*
2. Օրենսգիրքը որպես վարչաիրավական պատասխանատվության սուբյեկտ է ճանաչում միայն ֆիզիկական անձին, սահմանելով, որ *վարչական պատասխանատվության ենթակա են այն անձինք, որոնց տասնվեց տարին լրացել է մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը* (հոդված 12):
3. Հատկանշական է այն հանգամանքը, որ քննարկվող նորմում օգտագործված է *«գործատու»* եզրույթը, որն աշխատանքային-իրավական առումով ունի հետևյալ բովանդակությունը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

¹ 17.01.2012 թվականի թիվ 01-Լ եզրակացության օրինակը կցվում է:

² Գործատուի կողմից աշխատավարձ չհաշվարկելը և (կամ) չվճարելը:

1. *Գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը:*

2. ***Գործատու կարող է լինել** աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող **իրավաբանական անձը**` անկախ կազմակերպական-իրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից և տեսակից և **ֆիզիկական անձը**:*

Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որպես գործատու կարող է հանդես գալ աշխատանքային պայմանագիր կնքելու իրավունք ունեցող այլ սուբյեկտ (հիմնարկ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին և այլն):

4. Նշված նորմից ակներև է այն հանգամանքը, որ որպես գործատու կարող է հանդես գալ ինչպես ֆիզիկական, այնպես էլ **իրավաբանական անձը**, մինչդեռ Օրենսգրքով գործող իրավակարգավորման պարագայում վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել բացառապես ֆիզիկական անձը:
5. Չնայած այն հանգամանքին, որ Օրենսգրքով գործող իրավակարգավորման պարագայում վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել բացառապես ֆիզիկական անձը, այդուհանդերձ, վարչաիրավական հարաբերություններ կանոնակարգող այլ օրենքներով նախատեսված դեպքերում վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել նաև իրավաբանական անձը:
6. Մասնավորապես՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն իրավաբանական անձը կարող է վարչական պատասխանատվության ենթարկվել հարկային իրավախախտումների համար: Հարկային հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի խախտման համար պատասխանատվության կարգավորումն իրականացվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, որի չորրորդ գլուխը նվիրված է **հարկ վճարողների** կողմից հարկային օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվությանը: Նույն օրենքի 5-րդ հոդվածի իմաստով հարկ վճարողներ են հանդիսանում ֆիզիկական և իրավաբանական անձինք, հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները:
7. Բացի այդ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի յոթերորդ գլուխը պատասխանատվություն է նախատեսում նշված օրենքը խախտելու համար: Նշված գլխում ամրագրված իրավական նորմերի վերլուծությունը վկայում է այն

մասին, որ իրավախախտման համար պատասխանատվություն է առաջանում տնտեսվարող սուբյեկտների համար, իսկ նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտ են հանդիսանում արտոնագրային վճար վճարողները, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, այլ կազմակերպությունները, դրա ներկայացուցիչները, ներկայացուցչությունները կամ մասնաճյուղերը, անձանց խումբը, առևտրային ցանցերը: Սույն օրենքով նախատեսված համակենտրոնացման դեպքում տնտեսվարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը:

8. Իրավաբանական անձին՝ որպես տնտեսվարող սուբյեկտի պատասխանատվության ենթարկելու մասին է խոսում նաև Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումների³ ուսումնասիրությունը, որոնցով հանձնաժողովը օրենքի խախտման համար վարչական պատասխանատվության է ենթարկել մի շարք ընկերությունների՝ որպես վարչական տույժ կիրառելով նախազգուշացումը կամ տուգանքը:
9. Նույն կարգավորումն է իրականացնում նաև «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվող հարաբերությունների սուբյեկտ են հանդիսանում նաև ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները: Արժույթային հարաբերությունների կարգավորող օրենսդրության խախտման համար նշված օրենքի հինգերորդ գլխով նախատեսվող պատասխանատվությունն, ըստ էության, վարչական պատասխանատվություն է, որը օրենքի իմաստով կարող է նշանակվել նաև կազմակերպությունների՝ որպես արժույթային հարաբերությունների մասնակիցների նկատմամբ:
10. Օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը համարվում է պատասխանատվության միջոց և կիրառվում է, նպատակ ունենալով վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակել խորհրդային օրենքները պահպանելու, սոցիալիստական համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը:
11. Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կիրառվող վարչական

³ <http://www.competition.am/index.php?menu=149&y=&m=&p=2&lng=1>

տույժերի տեսակներից է նաև տուգանքը, որը հանդիսանում է հիմնական վարչական տույժի տեսակ (հոդված 24):

12. Սույն սահմանադրական գործով դիմողի կողմից վիճարկվող իրավական նորմով նախատեսված վարչական իրավախախտման՝ գործատուի կողմից աշխատավարձ չհաշվարկելու և (կամ) չվճարելու համար որպես վարչական տույժ նախատեսվում է տուգանք՝ յուրաքանչյուր աշխատողի մասով չհաշվարկված կամ չվճարված աշխատավարձի մեկ քառորդի չափով:
13. Հատկանշական է, որ Օրենսգրքի վերանշյալ հոդվածը որպես վարչական պատասխանատվության տեսակ նախատեսում է տուգանքը, այդուհանդերձ, նույն օրենսգրքում տուգանքի հասկացությունը և չափը սահմանող 26-րդ հոդվածը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 11.12.2002 թվականի ՀՕ-495-Ն ՀՀ օրենքով ճանաչվել է ուժը կորցրած: Այսինքն՝ ստացվում է այնպես, որ անձը չի կարող իմանալ թե ի՞նչ է տուգանքը, ո՞ր արարքների դեպքում և ի՞նչ չափով կարող է անձի նկատմամբ կիրառվել:
14. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում⁴ անդրադառնալով օրենքի որոշակիության հարցին, մասնավորապես նշել է. «*օրենքը պետք է լինի մատչելի և ձևակերպված լինի այնքան հստակ, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի կանխատեսել այն հետևանքը, որը կառաջացնի որոշակի գործողության կատարումը*»: Օրենքը պետք է *իրավական լինի*, այսինքն՝ իր հիմքում պետք է ունենա *իրավունքի գերակայության սկզբունքը*: Օրենքը դառնում է անհատի ազատության, անվտանգության և սեփականության պաշտպանը, նրա իրավունքների իրացման երաշխավոր միայն այն դեպքում, երբ *իրավական է*: Իրավական օրենքին ներկայացվող պահանջներն են *իրավական որոշակիությունը, հստակությունը և կանխատեսելիությունը*:
15. Տվյալ պարագայում, գտնում ենք, որ նշված նորմը չի համապատասխանում օրենքի որոշակիության սկզբունքին, քանի որ այն բավարար չափով հստակ և կանխատեսելի չէ, որպեսզի անձը կարողանա դրան համապատասխանեցնել իր վարքագիծը:

⁴ Տե՛ս՝ Sunday Times v. the United Kingdom, judgment of 26 April 1979, Series A no. 30, p. 31, l 49; Rekvnyi v. Hungary [GC], no. 25390/94, l 34, ECHR 1999 III; Rotaru v. Romania [GC], no. 28341/95, l 55, ECHR 2000 V; Maestri v. Italy [GC], no. 39748/98, l 30, ECHR 2004-I:

II. Իրավաբանական անձանց պատասխանատվության առանձնահատկությունները.

16. Ինչպես ցանկացած պատասխանատվության պարագայում, վարչական պատասխանատվության դեպքում նույնպես, անհրաժեշտ է իրավախախտման կազմի առկայությունը, որի տարրերն են հանդիսանում՝ ա) *հակահրավական արարքը*, բ) *վնասի առկայությունը*, գ) *պատճառահետևանքային կապի առկայությունը հակահրավական արարքի և առաջացած վնասի միջև*, դ) *մեղքի առկայությունը*:

Ընդ որում, վերոնշյալ պայմանների միաժամանակյա առկայությունը պարտադիր է, քանի որ դրանցից որևէ մեկի բացակայությունը բացառում է պատասխանատվության կիրառումը:

17. Սույն մեկնաբանություններում արձանդավաճ խնդրի լուծման համար վերոնշյալ չորս պայմաններից կարևորություն է ներկայացնում *մեղքի առկայության պայմանը*, որը բնութագրում է արարքի *սուբյեկտիվ կողմը*:

18. Ինչպես հայտնի է իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Իրավաբանական անձի՝ որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտի իրավունակությունը և գործունակությունն իրականացվում է նրա մարմինների միջոցով:

19. Իրավաբանական անձի պատասխանատվության հարցում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում վերջինիս գործողություններում *մեղքի առկայության խնդիրը*:

Իրավագիտության և հոգեբանության մեջ, մեղքը բնութագրվում է գիտակցական-կամային հասկանիչով և արտահայտում է իրավախախտի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ:

Ընդունված կոնցեպցիայի համաձայն՝ իրավախախտման մեջ իրավաբանական անձի «մեղքը» ճանաչվում է այն դեպքում, երբ հաստատվում է տվյալ կազմակերպության կողմից օրենսդրությամբ իր վրա դրված և/կամ իր կողմից սեփական նախաձեռնությամբ ստանձնած պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև՝ իրավաբանական անձի կողմից այն նորմերի չպահպանման փաստը (դրանց պահպանման համար

բոլոր անհրաժեշտ միջոցառումները չձեռնարկելը), որոնք պարտադիր են եղել նրա համար:

III. Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հարցի կարգավորումը միջազգային օրենսդրության համաձայն.

20. Սույն ուսումնասիրության շրջանակներում հարկ ենք համարում անդրադարձ կատարել նաև խնդրո առարկա հանդիսացող հարցի կարգավորմանն այլ պետությունների օրենսդրության շրջանակներում:
21. Այսպես՝ Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերլուծությունը թույլ է տալիս փաստելու, որ չնայած այն հանգամանքին, որ այն առանձին հոդված չի պարունակում վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների վերաբերյալ, այդուհանդերձ, օրենսգրքի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում այն հանգամանքը, որ վարչական զանցանքների համար պատասխանատվության ենթակա են ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձինք:
22. ՌԴ ՎԻՎ օրենսգրքի՝ օրենքի առջև հավասարության սկզբունքը երաշխավորող 1.4. հոդվածի 1-ին մասը սահմանում է՝
Վարչական իրավախախտում կատարած անձինք հավասար են օրենքի առջև: Ֆիզիկական անձինք ենթակա են վարչական պատասխանատվության անկախ սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, ունեցվածքից և պաշտոնեական դրությունից, բնակության վայրից, կրոնական հայացքներից, համոզմունքներից, հասարակական միավորումներին անդամությունից, ինչպես նաև այլ հանգամանքներից: Իրավաբանական անձինք ենթակա են վարչական պատասխանատվության անկախ գտնվելու վայրից, կազմակերպա-իրավական ձևից, ենթակայությունից, ինչպես նաև այլ հանգամանքներից:
23. Նույն օրենսգրքի 2.1. հոդվածը սահմանում է, որ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում ֆիզիկական կամ իրավաբանական անձի հակաիրավական, մեղավոր գործողությունը (անգործությունը), որի համար սույն օրենսգրքով կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների օրենքներով նախատեսված է վարչական պատասխանատվություն:
24. Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ իրավաբանական անձը վարչական իրավախախտում կատարելու համար մեղավոր է ճանաչվում, եթե կհաստատվի, որ վերջինիս մոտ կար այն կանոնների և նորմերի պահպանման հնարավորություն, որոնց

խախտման համար սույն օրենսգրքով կամ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների օրենքներով նախատեսված է վարչական պատասխանատվություն, սակայն տվյալ անձի կողմից չեն ձեռնարկվել դրանց պահպանման հետ կապված իրենից կախված բոկոր միջոցները:

25. Վերը նշված իրավական նորմերն ուղղակիորեն նախատեսում են իրավաբանական անձի վարչական պատասխանատվություն կրելու կարգավորում և նույնիսկ սահմանում են նրա մեղքի դրսևորման ձևը:

Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը կարգավորում է նախատեսում այն դեպքերի համար, երբ միևնույն արարքում դրսևորվում է թե՛ իրավաբանական և թե՛ ֆիզիկական անձանց մեղավորությունը: Համաձայն այդ նորմի՝ *իրավաբանական անձի նկատմամբ վարչական պատասխանատվության կիրառումը վարչական պատասխանատվությունից չի ազատում տվյալ իրավախախտման համար մեղավոր ֆիզիկական անձին, ինչպես և ֆիզիկական անձին վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելը, իրավաբանական անձին չի ազատում տվյալ իրավախախտման համար վարչական պատասխանատվությունից:*

26. Բելառուսի Հանրապետության (այսուհետ՝ ԲՀ) վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 1.1 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *Բելառուսի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը որոշում է, թե որ արարքներն են հանդիսանում վարչական իրավախախտումներ, ամրագրում է վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքն ու պայմանները, սահմանում է վարչական տույժերը, որոնք կարող են կիրառվել վարչական իրավախախտում կատարած ֆիզիկական անձանց, ինչպես նաև՝ սույն օրենսգրքին համապատասխան մեղավոր ճանաչված և վարչական պատասխանատվության ենթակա իրավաբանական անձանց նկատմամբ:*

27. ԲՀ ՎԻՎ օրենսգրքի 1.4. հոդվածի համաձայն՝ *ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը մեղավոր է ճանաչվել Բելառուսի Հանրապետության տարածքում վարչական իրավախախտում կատարելու մեջ, ենթակա է վարչական իրավախախտման սույն օրենսգրքին համապատասխան:*

28. Օրենսգիրքը պարունակում է նաև մի շարք դրույթներ, որոնք վերաբերվում են օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վիճակը բարելավող կամ վատթարացնող իրավական նորմերի հետադարձ ուժին,

ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից կրկնակի, ինչպես նաև տևող վարչական իրավախախտում կատարելու, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետի և այլնի վերաբերյալ:

29. Օրենսգրքում առանձնակի ուշադրության է արժանի իրավաբանական անձի մեղքը սահմանով 3.5. հոդվածը համաձայն որի՝ *իրավաբանական անձը վարչական իրավախախտում կատարելու մեջ ճանաչվում է մեղավոր, եթե կհաստատվի, որ տվյալ իրավաբանական անձի կողմից չեն պահպանվել նորմերը (կանոնները), որոնց խախտման համար նախատեսված է վարչական պատասխանատվություն, և տվյալ անձի կողմից չեն ձեռնարկվել դրանց պահպանման բոլոր միջոցները:*

30. Իրավաբանական անձի վարչական պատասխանատվության ինստիտուտ է նախատեսում նաև Սոլոդովայի Հանրապետության իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, որի 17-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝

1. Իրավախախտման համար իրավաբանական անձը, բացառությամբ հանրային իշխանության մարմինների և հանրային հաստատությունների, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում, իր անունից կամ իր մարմինների կամ դրանց ներկայացուցիչների կողմից հոգուտ իր շահերի կատարված արարքների համար պատասխանատվություն է կրում, հետևյալ պայմաններից որևէ մեկին համապատասխան՝

ա) այդ անձը մեղավոր է պարտականություններ նախատեսող կամ որոշակի գործունեության իրականացումն արգելող օրենքի դրույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մեջ,

բ) այդ անձը մեղավոր է հիմնադիր փաստաթղթերին կամ հայտարարված նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու մեջ,

գ) արարքներ, որոնք այլ անձին, հասարակությանը կամ պետությանը պատճառել են զգալի վնաս կամ ստեղծել են այդպիսի վտանգ, կատարվել է այդ անձի շահերից ելնելով, թույլատրվել, սանկցավորվել, հաստատվել, օգտագործվել է դրա իրավասու մարմինների կամ պաշտոնարար անձի կողմից:

31. Իրավաբանական անձի վարչական պատասխանատվություն է նախատեսում նաև Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, որի 31-րդ հոդվածը սահմանում է՝

Վարչական պատասխանատվության ենթակա են՝

1. մեղսունակ ֆիզիկական անձը, ով հասել է սույն օրենսգրքով սահմանված տարիքի,

2. իրավաբանական անձր:

32. Այսպիսով, իրավաբանական անձանց պատասխանատվության առանձնահատկությունների և վերը թվարկված պետությունների փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ այլ օրենքներով վարչաիրավական պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում նաև իրավաբանական անձը, սակայն Օրենսգրքով վարչաիրավական պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում միայն ֆիզիկական անձը:

Եզրակացություն.

Կատարված ուսումնասիրության արդյունքում, կարելի է փաստել, որ պետությունների վրա, թե՛ Սահմանադրություններով, և թե՛ միջազգային իրավական ակտերով հստակ պարտավորություն է դրված՝ պաշտպանելու մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Այս պարտավորության իրականացումը հնարավոր կլինի միայն իրավական օրենքի առկայության պարագայում, որում պետք է արտահայտված լինի իրավունքի գերակայության սկզբունքը, որի հիմքում ամենից առաջ պետք է ընկած լինի անհատի ազատության, անվտանգության, սեփականության և այլ հիմնարար իրավունքների երաշխավորումը և պաշտպանությունը:

Կենտրոնն արձանագրում է, որ Վիճարկվող նորմն ուղղակիորեն հակասության մեջ չմտնելով ՀՀ Սահմանադրության նորմերի հետ, այդուհանդերձ իր բնույթով չի համապատասխանում օրենքի որոշակիության սկզբունքին, քանի, որ անձի համար հստակ և կանխատեսելի չէ:

Վիճարկվող նորմի առկայության պարագայում ստացվում է այնպես, որ միննույն իրավաբանական եզրույթը տարբեր իրավական ակտերի կողմից տարբեր մեկնաբանություններ է ստանում:

Մասնավորապես՝ «գործատու» եզրույթն օգտագործվում է այլ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի հետ չհամընկնող մեկնաբանությամբ, որն ի տարբերություն Օրենսգրքի՝ գործատու է համարում ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձին:

Ամփոփելով վերոգրյալը, Կենտրոնը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.⁸-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն եզրակացության մեջ արտահայտված իրավական դիրքորոշման շրջանակներում:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան